

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ****«ԻՆՔՆԱԲԱՎ ՌԵԺԻՄՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ****Արտակ ՉԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

20-րդ դարի սկզբին միջազգային համակարգը ընկալվում էր որպես համեմատորեն սակավաթիվ նորմեր պարունակող հիերարխիկ բուրգ, ուր պետությունները համարվում էին համարյա միանձնյա գործող մուխ (փակ) և միակ դերակատարներ<sup>1</sup>, իսկ ժամանակակից միջազգային իրավունքը նման է կիրառման բնագավառում կրկնօրինակվող մանրամասնեցված կարգեր ունեցող խիտ ցանցի, որը ծավալվում է շրջակա միջավայրի միջազգային իրավական պաշտպանությունից մինչև մարդու իրավունքների և միջազգային առևտուր: Նման անցումների և փոխակերպումների լույսի ներքո քաղաքական և իրավական տեսություններում առաջ քաշվեց ցանցի՝ որպես իրավակարգի հայացքների և հասկացությունների մրցակցող համակարգի հայեցակարգը: Նրանք միջազգային իրավունքը նկարագրում էին որպես կառավարական պաշտոնյաների, իրավաստեղծ մարմինների և դատավորների մի համակարգ<sup>2</sup>, որպես «օրենքի ապատարածքայնացված համակարգ», որը փոխակերպել է պետությունը<sup>3</sup> կամ էլ որպես լեգիտիմություն ստեղծող աշխարհով մեկ տարածվող հորիզոնական ճկուն համակարգ<sup>4</sup>:

Նման պայմաններում մենք սկսում ենք գործ ունենալ ոչ թե միատարր և ֆորմալ տեսակետից միասնականորեն կարգավորվող համակարգի հետ, այլ տարբեր հատուկ նորմերի (lex specilais-ի) համախմբերի վրա հիմնվող, դրանցով կարգավորվող

և առաջնորդվող տարբեր ենթահամակարգեր հետ:

2001 թ. Միջազգային իրավունքի հանձնաժողովի (ՄԻՉ) կողմից ընդունված «Պետությունների՝ միջազգային իրավախախտումների համար պատասխատավության հողվածները» հավասար հայեցակարգային հիմքերի վրա են դնում ընդհանուր միջազգային իրավունքի և միջազգային իրավունքի նոր՝ տարածվող ռեժիմներում առկա երկրորդային նորմերի փոխհարաբերակցությունը: «Հատուկ կանոն» վերանագրված 55-րդ հոդվածը փաստորեն բացում է դռները նման երկրորդային կանոնների համախմբերի համար:

*«Այս հողվածները չեն կիրառվում այնտեղ և այն չափով, որով միջազգային իրավախախտման պայմանները կամ պետության միջազգային պատասխանատվության կիրառման բովանդակությունը տնօրինվում են միջազգային իրավունքի հատուկ կանոններով»<sup>5</sup>:*

Մի կողմից թվում է, թե հատուկ նորմերը ձևակերպված են որոշ առաջնային նորմեր փոխատեղելու համար (օրինակ՝ պետությունների միջազգային իրավական պատասխանատվության բնագավառում)<sup>6</sup>՝ անձեռնմխելի թողելով նման իրավական շրջանակի մնացյալ մասի կիրառումը:

Մեկնաբանությունների 55-րդ հոդվածը անդրադառնում է նաև հատուկ նորմերի բոլոր տեսակներին՝ սկսած դրանց «թույլ» (տարրալուծված) տեսակներից, որոնք, պարզապես, հատուկ կետերի մասով *փոփոխում են* ընդհանուր միջազգային իրավունքը և ավարտուն, «ինքնաբավ ռեժիմների» նման «ուժեղ» (խտացված) տեսակները, որոնք հստակ դրույթի կամ ռեժիմի կառուցվածքի բնույթից կամ օբյեկտից կամ էլ նպատակից ելնող ենթադրությամբ

միջոցով փորձում են ընդհանրապես բացառել ընդհանուր միջազգային իրավունքի կիրառումը<sup>6</sup>:

Ընդհանուր միջազգային իրավունքի բացառմանն ուղղված հատուկ նորմի այս տեսակի մասին հայեցակարգը բնութագրվում է որպես «ինքնաբավ ռեժիմներ» (ավտոնոմ ռեժիմներ) (self-contained regimes):

ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովը սահմանել և ճանաչել է ինքնաբավ ռեժիմները որպես պետությունների պատասխանատվությունը կարգավորող նորմերի ենթադաս (իսկ ավելի հստակ՝ «խտացված նորմեր»): Որպես այդպիսին՝ այն, ամենայն հավանականությամբ, տարածվում է այն դեպքերի վրա, երբ երկրորդային նորմերի որոշակի համախումբը ընդհանուր իրավական զանգվածում հավակնում է գերակայություն ունենալ միջազգային պատասխանատվության՝ այլ երկրորդային նորմերի նկատմամբ:

Այս եզրի ծագումը կապվում է ՄԱԿ-ի Միջազգային իրավունքի հանձնաժողովի հատուկ զեկուցող Վիլլեմ Ռիփհեգենի անվան հետ: ՄԻՉ ներկայացրած հաշվետվություններում և Միջազգային իրավական պատասխանատվության հոդվածների վերաբերյալ իր դիտողություններում և առաջարկություններում Ռիփհեգենը մի շարք նոր եզրեր ներդրեց: Ըստ Ռիփհեգենի՝ «...միջազգային իրավունքը կառուցվում է ոչ թե մեկ միասնական համակարգի, այլ մի շարք փոխկապակցված ենթահամակարգերի հիման վրա, որոնցից յուրաքանչյուրի շրջանակներում առաջնային և երկրորդային նորմերը սերտ փոխկապակցված են և ըստ էության անբաժանելի են իրարից<sup>7</sup>: Ռիփհեգենը կիրառում է նաև «հատուկ ռեժիմներ», «օբյեկտիվ ռեժիմներ», «իմպերատիվ ենթահամակարգեր» կամ «պարտադիր օբյեկտիվ ռեժիմներ» եզրերը: Նախ և առաջ փորձենք հասկանալ, թե տվյալ համատեքստում ինչ է նշանակում «ենթահամակարգ» տերմինը:

Ըստ հատուկ զեկուցողի՝ «...ենթահամակարգը վարքագծի կանոնների, ընթացակարգային կանոնների և կարգավիճակային դրույթների կանոնակարգված ամ-

բողջականություն է, որը փոխահարաբերվում է այլ ենթահամակարգերի հետ»<sup>8</sup>:

Այս իմաստով «ռեժիմ» եզրը նույնական նշանակություն ունեւ «ենթահամակարգ» եզրի հետ, իսկ Ռիփհեգենի հետագա հաշվետվությունները տարբերակում չէին դնում «ենթահամակարգ» և «ինքնաբավ ռեժիմ» հասկացությունների միջև («...նման ենթահամակարգերը, սկզբունքորեն, «ինքնաբավ են» (self-contained) այն առումով, որ դրանք չեն կարող բացառվել (չեղյալ հայտարարվել) այլ ենթահամարգերին պատկանող իրավիճակներով կամ նկատառումներով»)<sup>9</sup>:

Բրունո Սիմման տվյալ թեմայի ուսումնասիրության համար դարակազմիկ նշանակություն ունեցող իր հոդվածում ավելի առաջ գնաց՝ տալով «ինքնաբավ ռեժիմների» արդեն իսկ «դասական» դարձած նկարագրությունը. «...ինքնաբավ ռեժիմների հայեցակարգը չըպետք է կիրառվի որպես «ենթահամակարգի» հոմանիշ, այլ պետք է վերապահվի ենթահամակարգերի որոշակի տեսակ բնորոշելու համար, այն է՝ երկրորդային կանոնների լիարժեք (սպառիչ և հստակ) ամբողջությունն ընդգրկողները»<sup>10</sup>: Այսպիսով, «ինքնաբավ ռեժիմը» հանդիսանում է ենթահամակարգ, որը նպատակադրված է գրեթե ամբողջապես բացառելու իրավախախտումների նկատմամբ ընդհանուր իրավական հետևանքների կիրառումը և մասնավորապես սովորաբար տուժող կողմից հայեցողության տակ գտնվող հակազդման (ընդհանուր) միջոցները:

Չնայած Մեկնաբանությունները չեն տալիս «ուժեղ» ռեժիմի սահմանում, սակայն նրանք որպես օրինակ ներկայացնում են Միջազգային արդարադատության մշտական պալատի (Ուիմբլդոն 1923թ.) և Արդարադատության միջազգային դատարանի պատանդների (1980թ.) գործերով ուրոշումները:

Պատանդների գործում Արդարադատության միջազգային դատարանը սահմանեց դիվանագիտական ռեժիմը որպես «ինքնաբավ համակարգ»՝ հղում կատարելով այն հանգամանքի վրա, որ այն ստեղծել է խախտումներին արձագանքելու իր

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

ուրույն՝ «ներքին» սեփանիզմը: «Դիվանագիտական իրավունքի նորմերը ավտոնոմ համակարգ են, որ մի կողմից սահմանում են ընդունող պետության՝ արտոնությունների և անձեռնմխելիությունների վերաբերյալ պարտավորությունները, իսկ մյուս կողմից նախատեսում են վերջիններիս հնարավոր չարաշահումները դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների կողմից և սահմանում են ընդունող պետության տրամադրության տակ գտնվող միջոցները նման չարաշահումներին արձագանքելու համար»<sup>11</sup>:

Նիկարագուայի գործով էլ Դատարանը գրեթե նմանօրինակ դիրքորոշում ցուցաբերեց մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ. համապատասխան պայմանագրերում ամրագրված են պատասխանատվության սեփական ռեժիմները, որոնք անընդունելի են դարձնում արձագանքման ցանկացած այլ տեսակ:

Մինչդեռ *Ուլիմբլոդն*՝ գործով Միջազգային արդարադատության մշտական պալատի որոշումը ավելի լայն կերպով է մեկնաբանում «ավտոնոմ ռեժիմ» հասկացությունը: Այդ դեպքում խնդրո առարկա էր դառնում Քիլի ջրանցքի կարգավիճակը, որը կարգավորվում էր թե՛ ջրային ուղիների վերաբերող ընդհանուր նորմերով և թե՛ 1919թ. Վերսալի պայմանագրով՝ հենց ջրանցքին վերաբերող հատուկ նորմերով: Ահա թե ինչպես է բնութագրվել կիրառելի իրավունքը Դատարանի կողմից.

«Չնայած Քիլի ջրանցքը կառուցվել է Գերմանիայի կողմից հենց Գերմանիայի տարածքում, սակայն Վերսալյան պայմանագիրը այն չդասեց գերմանական այլ ջրային ուղիների հետ մի շարքը, և այս նպատակների համար հատուկ բաժին առանձնացվեց... Տարբերությունը այն է, որ Քիլի ջրանցքը ազատ նավարկության համար բաց է Գերմանիայի հետ չպատերազմող ցանկացած պետության ռազմանավերի և տրանզիտային նավերի համար, այն դեպքում, երբ երկրի մնացած ջրային ուղի-

ները կարող են օգտագործվել միայն դաշնակից և ասիոցացվող տերությունների համար: Այսպիսով Քիլի ջրանցքին վերաբերող դրույթները ավտոնոմ բնույթ են կրում: Նրանց հիմքում ընկած գաղափարը ոչ թե զուգահեռներ անցկացնելն է այլ ջրային ուղիներին վերաբերող դրույթների հետ, այլ հակադիրից բխող փաստարկում, այսինքն՝ դրանց բացառող փաստարկման մեթոդում»<sup>12</sup>:

Այստեղ դատարանի կողմից ավտոնոմ եզրի կիրառումը ենթադրում է, որ որևիցե **հատուկ** խնդրին անդրադարձող կոնվենցիոն նորմերը գերակայություն են ստանում ցանկացած արտաքին նորմի նկատմամբ:

Այսպիսով կարող են նախնական տարանջատում կատարել «ինքնաբավ ռեժիմ» հասկացության երկու ճյուղավորումների միջև: Նեղ իմաստով՝ այն նշանակում է իրավական կարգավորման բնագավառում երկրորդային նորմերի համակարգի գոյություն, որը **սահմանափակում է** ընդհանուր իրավունքի կիրառում և վերջինիս նկատմամբ գերակա դիրք զբաղեցնելու հավակնություն ունի («թույլ նորմեր»): Ավելի լայն իմաստով այն նշանակում է առաջնային և երկրորդային նորմերի միջև ընդհանուր փոխկապակցվածության առկայություն, որն էլ հաճախ «համակարգ» կամ «ենթահամակարգ» են անվանում: Վերջինիս առավելապես բացառում է ընդհանուր միջազգային իրավունքի կիրառումը՝ ընդհանուր իրավական նորմերին այլ մեկնաբանություններ տալով, իսկ վերջին ժամանակներում դրանք լիովին անտեսելով («ուժեղ»): Այս՝ ավելի լայն իմաստով «ինքնաբավությունը» շաղկապվում է միջազգային իրավունքին այդքան բնորոշ պայմանագրային հակվածության հետ. երբ որևիցե հարց կարգավորվում է որոշակի պայմանագրով, ապա միանգամից վերանում է այլ աղբյուրների **անմիջականորեն** դիմելու անհրաժեշտությունը:

Քանի որ նման ռեժիմները կառուցվածքային առումով զույգված են սոցիալական ոլորտների անկախ տրամաբանության հետ, նրանք անխուսափելիորեն, թեկուզ և

այլ տեսքով, վերարտադրում են իրավունքում առկա տարբեր գործառույթային համակարգերի միջև առկա կառուցվածքային բախումը: Մասնագիտացված իրավունքի նոր ճյուղերը պատահական չեն ծագում. դրանք կոչված են արծագանքներու տեխնիկական և գործառույթային նոր պահանջներին: Յուրաքանչյուր նորմատիվ համալիրի կամ «ռեժիմի» ներուճակ են սեփական սկզբունքները, փորձաքննության սեփական եղանակը և սեփական «ինքնությունը», որը պարտադիր չէ, որ նման լինի հարևան ճյուղի «ինքնությամբ»: Օրինակ՝ առևտրային իրավունքը և շրջակա միջավայրի պաշտպանության իրավունքը բացառապես ներհատուկ նպատակներ են հետապնդում և հիմնվում են այնպիսի սկզբունքների վրա, որոնք հաճախ տարբեր կողմեր են ցույց տալիս: Նոր իրավունքն արդյունավետ դարձնելու համար այստեղ ներառում են պայմանագրային բացառությունների և դրույթների նոր ձևեր, որոնք կարող են համահունչ չլինել նախկին ընդհանուր իրավունքի կամ մասնագիտացված այլ ոլորտի իրավունքի հետ: Շատ հաճախ նոր կանոնները կամ ռեժիմները հատուկ ստեղծվում են նախկինում ընդհանուր իրավունքով նախատեսվածից տարբերվելու համար, ու քանի որ նման «տարբերությունները» լայն տարածում են գտել, դրանից տուժում է իրավունքի միասնությունը: Ինքնաբավ ռեժիմների որոշիչ հատկությունը ոչ միայն այն է, որ նրանք խիստ մասնագիտացված առաջնային կանոններ են ստեղծում, այսինքն՝ ինքնուրույն կանոններ իրավունքի հատուկ ճյուղերում, սակայն նաև իրենց սեփական ընթացակարգային նորմերն են «արտադրում» իրավաստեղծ, իրավաճանաչման և իրավական սանկցիաների վերաբերյալ՝ այսպես կոչված երկրորդային կանոնները<sup>13</sup>:

Ինչպես տեսնում ենք, *lex specialis*-ի համակողմանի կիրառումը հանգեցրեց թե՛ միջազգային իրավունքի ճյուղավորման և թե՛ դրա հետևանքով ընդհանուր միջազգային իրավունքում «մասնագիտացված (ինքնաբավ) ռեժիմների», այսինքն նոր՝ ընդհանուր միջազգային իրավունքի հետ հաճախ չհա-

մաձայնեցված համակարգերի ծագման, իսկ միասնական տերմինաբանության բացակայությունը հանգեցրեց իրավական ենթահամակարգերի «ինքնաբավության» բնույթի վերաբերյալ հակասական քննարկումների ծավալմանը: **Ինքնավարության** տարբեր մակարդակները սկսեցին զուգորդվել «ինքնաբավ ռեժիմներ» (self-contained regimes) եզրույթի հետ:

«Ինքնաբավ ռեժիմներ» հասկացությունը սկսեց թյուրըմբռնվել՝ հոգուտ լիովին ինքնավար իրավական ենթահամակարգերի: Սակայն սոցիալական համակարգերը չեն կարող գոյատևել իրենց միջավայրից անջատ: Նիկլաս Լունանի համակարգային տեսության համաձայն՝ բոլոր համակարգերը որոշ չափով փոխկապակցված են համակարգային զուգակցմամբ<sup>14</sup>: Միջազգային իրավունքի մնացած զանգվածից մեկուսացած իրավական ենթահամակարգերը նմանապես ըմբռնելի չեն: Միշտ կլինի կապվածության ինչ-որ մակարդակ կամ գոնե մեկնաբանություն:

Հղում կատարելով Միջազգային իրավունքի հանձնաժողովի «Ֆրագմենտացիայի ուսումնասիրման խմբի» ղեկավարին՝ պետք է ասել, որ ոչ մի պայմանագիր, լինի դա հատուկ իր նպատակային մասում կամ սահմանափակված լինի մասնակիցների քանակով, չի կիրառվում նորմատիվային վակուումում և հենվում է սովորության իրավունքի մի շարք ընդհանուր, հաճախ չգրված սկզբունքների վրա: Դեռ ավելին՝ այս նորմատիվ միջավայրը ներառում է իրավական սուբյեկտները, նրանց հիմնական իրավունքներն ու պարտավորությունները բնորոշող սկզբունքներ և այն ձևերը, որոնց միջոցով այս իրավունքներն ու պարտականությունները վերանայվում կամ վերանում են<sup>15</sup>:

Առանց «ընդհանուր իրավունքի» ամենահասության՝ հնարավոր է, որ հատուկ իրավական ենթահամակարգը, ինչպես Ջորջ Աբի-Սաաբն է նշում, կնուտացվեր «իրավական Ֆրանկենշտեյնի», որին «արդեն չէին մասնակցի լեգիտիմության և ֆորմալ նպատակահարմարության նույն հիմքի վրա»<sup>16</sup>:

### **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Նույնիսկ այնպիսի «անջատողական» կառույց, ինչպիսին է Արդարադատության Եվրոպական դատարանը, հաստատեց, որ միջազգային ընդհանուր իրավունքի սկզբունքները մնացորդային դերակատարում ունեն ԵՄ իրավունքում:

Առևտրի համաշխարհային կազմակերպության դեպքում հենց իր քննած առաջին գործում Գանգատարկման մարմինը ճանաչեց, որ ԳԱՏՏ-ը լիովին ներկայված է մնում ընդհանուր միջազգային իրավունքում՝ նշելով. «Պայմանագիրը չպետք է ընթերցվի միջազգային հանրային իրավունքից կլինիկական մեկուսացման մեջ»<sup>17</sup>:

Այսպիսով, թյուրըմբռնումից խուսափելու համար «ինքնաբավ ռեժիմներ» եզրը չպետք է օգտագործվի լրիվ ավտոնոմ իրավական համակարգերի հիփոթեզը ուրվագծելու համար: Ընդհանրապես «ինքնաբավ ռեժիմների» ուսումնասիրությունը Միջազգային իրավունքի հանձնաժողովի տարբեր հատուկ զեկուցողների կողմից նույնպես հանգում է այն եզրակացության, որ «ինքնաբավ ռեժիմները» «փակ իրավական ցիկլ չեն», և նրանց կապը ընդհանուր միջազգային իրավունքի հետ անվիճելի է: Այսպես, արդեն իսկ հիշատակված հատուկ զեկուցող Ռիփիագենը չնայած օգտագործել էր «ավտոնոմ» եզրը և կանխատեսել էր այն «տեսական» հնարավորությունը, որ վարքագծի նորմերի, ընթացակարգային նորմերի և ստատուսային դրույթների համապատասխան համախումբը կարող է «փակ իրավական շրջան»<sup>18</sup> ստեղծել, սակայն «...դա ընդհանրապես չի նշանակում, որ նման ենթահամարգի գոյությունը լիովին բացառում է միջազգային սովորույթային իրավունքի ցանկացած ընդհանուր՝ հակաիրավական գործողությունների իրավական հետևանքերին վերաբերող նորմերի կիրառում... Դեռևս ենթահամակարգը ինքը կարող է չգործել, և այդ դեպքում հավանական է հետադարձումը այլ ենթահամակարգի», իսկ այնուհետև ավելացնում է, որ «Բազմազան

տարբեր [պետությունների պատասխանատվության] ռեժիմներից (ենթահամակարգերից) յուրաքանչյուրը... այսօր իրենից ներկայացնում է ՄԱԿ-ի կանոնադրության ունիվերսալ համակարգում դասակարգվող միջազգային իրավունքը»<sup>19</sup>:

Ռիփիագենին փոխարինած Արանջիո-Ռուփսը նույնպես չէր առարկում հատուկ պայմանագրային ռեժիմների ստեղծելուն, քանի որ դրանք անհրաժեշտ էին «...խախտումների նկատմամբ ավելի արդյունավետ և կազմակերպված վերահսկողության ու հատուկ մեխանիզմի միջոցով դրանց արձագանքնելու համար»: Սակայն նա երբեք չէր մերժում ընդհանուր իրավական նորմերին դիմելու մասին եզրակացությունը<sup>20</sup>: Դետադարձումը ընդհանուր միջոցներին անհրաժեշտ էր այն դեպքերում, երբ պետությունը արդյունավետ փոխհատուցում չի ստանում, կամ եթե հակաիրավական ակտը շարունակվում է հատուկ ռեժիմի համաձայն իրականացվող գործողությունների ժամանակ<sup>21</sup>: Հատուկ ռեժիմի գերակա դիրքը բխում է միջազգային իրավունքի ընդհանուր նորմերից և պայմանագրի մեկնաբանությունից, բայց դա չի հանգեցնում ընդհանուր իրավունքի երաշխիքներից հրաժարվելու կանխավարկածին<sup>22</sup>:

Ի վերջո հատուկ զեկուցող Քրոուֆորդը ձեռնապահ մնաց պատասխանելու այն հարցին, թե արդյոք «հատուկ ռեժիմները» բացառիկ բնույթ են կրում, «...յուրաքանչյուր դեպքում դրանք մեկնաբանության խնդիր են»<sup>23</sup>:

Այսինքն պարզ է դառնում, որ ոչ մի ռեժիմ լիովին մեկուսացած չէ միջազգային իրավունքից, որն էլ իր տեսական հաստատումն է ստանում 2003թ. Ֆրագմենտացիայի ուսումնասիրման աշխատանքային խմբի ղեկավար Մարտի Կոսկենհիեմիի լույս ընծայած «Աշխատանքային հետազոտության» մեջ, ուր հատուկ ենթահամակարգերը նկարագրվում են որպես հաստատապես ներկայված ամենաառաջին ընդհանուր միջազգային իրավունքի մեջ<sup>24</sup>:

Այսպես, մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի մարմիններ, ինչպիսիք են Մարդու իրավունքների Եվրոպա-

կան և Միջամերիկյան դատարանները, կանոնավոր կերպով հղում են կատարում միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին, որոնք վերաբերում են ոչ միայն միջազգային պայմանագրերի մեկնաբանությանը, այլև ընթացակարգային հիմնավորվածության մի շարք սկզբունքների: Օրինակ՝ 1988 թ. ընդունած իր որոշումներից մեկում Մարդու իրավունքիների միջամերիկյան դատարանը ուղղակիորեն հղում կատարեց պետությունների իրավահաջորդության սկզբունքին, ըստ որի՝ պետության պատասխանատվությունը պահպանվում է՝ պետական կառուցվածքի փոփոխությունից անկախ<sup>25</sup>:

Նմանօրինակ նախադեպ ստեղծվեց նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում, որը բացատրեց Եվրոպական կոնվենցիայով նախատեսված իրավունքների կապը պետական ինունհիտետների հետ: Մասնավորապես. «*Կոնվենցիան չի կարելի մեկնաբանել վակուումում: Դատարանը պետք է հաշվի նստի Կոնվենցիայի՝ որպես մարդու իրավունքների միջազգային պայմանագրի հատուկ բնույթի հետ, սակայն հաշվի առնի նաև միջազգային իրավունքի համապատասխան նորմերը: Կոնվենցիան պետք է հնարավորինս մեկնաբանել միջազգային իրավունքի այլ նորմերին համապատասխան, որի մասն էլ կազմում է հենց ինքը՝ Կոնվենցիան...»<sup>26</sup>:*

Նույնը դիրքորոշումը ձևակերպվել էր նաև 1999 թ. Բանկովիչի գործում, ուր Դատարանը արտահայտեց հետևյալ դատողությունը. «*Դատարանը հիշեցնում է այն մասին, որ Կոնվենցիայի հիմքում ընկած սկզբունքները չի կարելի մեկնաբանել և կիրառել վակուումում: Դատարանը խնդիրները քննելիս պետք է հաշվի առնի միջազգային իրավունքի համապատասխան նորմերը, որոնք վերաբերում են նրա իրավասությանը... Կոնվենցիան պետք է հնարավորինս մեկնաբանի միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, որի մասն էլ այն կազմում է»<sup>27</sup>:*

Այսպիսի օրինակի հանդիպում ենք նաև Առևտրի համաշխարհային կազմակեր-

պության Գանգատարկման մարմնի որոշումներում, չնայած կարծիք կա, թե ԱԶԿ համակարգում գտնվող միջազգային պայմանագրերը փակ շղթա են կազմում: «Կլիմիկական մեկուսացման» մասին հայտարարությունից հետո Գանգատարկման մարմինը բազմիցս «լրացուցիչ ուղղորդումներ էր պահանջում համապատասխան դեպքերում միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների մեկնաբանությունների»<sup>28</sup> վերաբերյալ:

Փաստորեն, ոչ մի «ինքնաբավ ռեժիմ» չպետք է ընկալվի որպես ավտոնոմ այն առումով, որ այն բացառում է ընդհանուր իրավունքի նորմերի կիրառումը: Այլ ընդհակառակը, այս բոլոր մարմինները անընդհատ առանջնորդվում են ընդհանուր միջազգային իրավունքի նորմերը՝ հիմնվելով այն կանխավարկածի վրա, որ նորմերի այս համախմբերը կան ռեժիմը հիմնադրող փաստաթղթերը պետք է մեկնաբանել միջազգային իրավունքի նորմերին համապատասխան և առանց a priori ենթադրելու, որ նման փաստաթղթերում ամրագրված նորմերը գերակա ուժ են ունենալու:

Այսպիսով, միջազգային իրավախախտումների հետևանքների՝ ընդհանուր իրավական արգասիքները «ինքնաբավ ռեժիմներով» փոխարինելու հիմքում ընկած է այն համոզմունքը, որ որոշ դեպքերում ընդհանուր ռեժիմի կիրառումը կարող է անհարկի և նույնիսկ ոչ արդյունավետ լինել խնդրո առարկա իրավահարաբերությունների համար: Այդ իսկ պատճառով «ինքնաբավ ռեժիմները», ըստ կարգավարման առարկա հանդիսացող հարաբերությունների առանձնահատկությունների, ավելի «հարմար» և «մանրամասնեցված» որոշումներ են առաջարկում: Միջազգային կազմակերպությունների կողմից հիմնված ենթահամակարգերում անդամ պետությունների միջև ինտեգրացիայի ավելի բարձր մակարդակը համապատասխանաբար ենթադրում է սանկցիաների ավելի բարձրացած մեխանիզմների առկայություն: Մնացած այլ դեպքերում, թերևս, «ինքնաբավ ռեժիմների» գոյությունը նվազեցնում է առաջնային պարտավորությունների ու-

**Միջազգային իրավունք**

ժը՝ տեղ տալով պարտադիր, քան կանոնորային որոշումներին:

«Ինքնաբավ ռեժիմների» առաջացումը կարելի է դրական տեղաշարժ համարել, եթե այս *leges speciales* - ները միտված կլինեն բարձրացնելու խնդրո առարկա առաջնային կանոնների արդյունավետությունը և կանոնակարգված ընթացակարգեր ու կոլեկտիվ որոշումների ինստիտուտ կներդնեն, քանի որ «ինքնաբավ ռեժիմները» տե-

սականորեն չեն առանձնանում միջազգային իրավունքից, և նրանց գործողության շրջանակը սերտորեն կապված է վերջինիս հիմնարար դրույթների հետ, իսկ տեսական քննարկումներից դեպի կոնկրետ դեպքեր անդրադառնալու դեպքում պարզ է դառնում, որ որոշակի պահից հետո յուրահատուկ իրավական հետևանքների «ինքնաբավության» վերաբերյալ հետագա պնդումները հանգեցնելու են հակասական լուծումների ռիսկի, որը կարող է խարխուլնման ռեժիմների և ընդհանրապես միջազգային իրավունքի հեղինակությունն ու վարկանիշը:

<sup>1</sup> Տե՛ս A. Wolfers, *Discord and Collaboration: Essays on International Politics* (1962), at 19-24:

<sup>2</sup> Տե՛ս A.-M. Slaughter, *A New World Order* (2004):

<sup>3</sup> Տե՛ս S. Sassen, *Losing Control? Sovereignty in an Age of Globalization* (1995), at xv, 25:

<sup>4</sup> Տե՛ս M. Hardt and A. Negri, *Empire* (2000), at 13:

<sup>5</sup> International Law Commission, *Report on the Work of its Fifty-third Session, Official Records of the General Assembly, Fifty-Sixth Session, Supplement No. 10 (A/56/10)*, at 58.

<sup>6</sup> Տե՛ս Bruno Simma, Dirk Pulkowski, *Of Planets and the Universe: Self-Contained Regimes in International Law*, *EJIL*, June 2006, p.490:

<sup>7</sup> Riphagen. *Third Report on State Responsibility*, in *ILC Yearbook* (1982), Vol. II. Part One, at 33 para 35:

<sup>8</sup> *ILC Yearbook 1982 vol. 1*, p. 202 para. 16.

<sup>9</sup> Preliminary Report, *ILC Yearbook 1980, vol.2 part 1 para. 39*.

<sup>10</sup> Bruno Simma, "Self-Contained Regimes", *Netherlands Yearbook of International Law*, p. 116 vol. XVI (1985), p. 117.

<sup>11</sup> Case concerning the United States Diplomatic and Consular Staff in Tehran (*United States of America v. Iran*), *I.C.J.Reports 1980*, p. 41, para. 86.

<sup>12</sup> Case of the S.S. "Wimbledon", *P.C.I.J. Series A, No. 1* (1923), pp. 23-4.

<sup>13</sup> Տե՛ս Bruno Simma, *Self-Contained Regimes*, 1985 *Neth. Y.B. Int'l L.* էջ 111:

<sup>14</sup> Տե՛ս N. Luhmann, *Die Gesellschaft der Gesellschaft* (1997), at 170, 776, 779:

<sup>15</sup> Տե՛ս M. Koskenniemi, *Study on the Function*

and Scope of the *lex specialis* Rule and the Question of "Self-Contained Regimes", *Doc. ILC(LVI)SG/FIL/CRD.1 and Add. 1*:

<sup>16</sup> *Abi-Saab, Fragmentation or Unification: Some Concluding Remarks*, 31 *NYU J Int'l L Pol.* (1999) 919, at 926.

<sup>17</sup> *US Standards for Reformulated and Conventional Gasoline, Report of the Appellate Body*, 29 Apr. 1996, *WT/DS2/AB/R* at 17.

<sup>18</sup> *Виллем Рифаген, Введение, Ежегодник Международного Права*, 1982 год, том I, стр.242, пункт 16.

<sup>19</sup> Ռիֆագենի նշված զեկույցը at 49, para. 104:

<sup>20</sup> *Газтано Аранджио-Руис, четвертый доклад, Ежегодник Международного Права*, 1992 год, том II, ч. 1, стр. 51-52, пункты 112-114.

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 52, կետ 115:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 54, կետ 123-124:

<sup>23</sup> *Джеймс Кроуфорд, Третий доклад об ответственности государств, документ A/CN.4/507/Add.4* (2001), стр. 31, пункт 420.

<sup>24</sup> Տե՛ս նշված հոդվածը էջ 7:

<sup>25</sup> *Velasquez Rodriguez case*, Judgment of 29 July 1988, *OC-4/88, Inter-American Yearbook on Human Rights* (1988) p. 990, para. 184.

<sup>26</sup> *McElhinney v. Ireland*, Judgment of 21 November 2001, *ECHR 2001-XI*, para. 36.

<sup>27</sup> *Bankovic v. Belgium and others*, Decision of 12 December 2001, *Admissibility*, *ECHR 2001-XII*, p. 351, para. 57.

<sup>28</sup> *United States - Import Prohibition of Certain Shrimp and Shrimp Products* (6 November 1998), *WT/DS58/AB/R, DSR 1998:1*, p. 2755, para. 151.

---

## “SELF-CONTAINED” REGIMES IN INTERNATIONAL LAW

**Artak HARUTYUNYAN**

*PHD student, YSU,*

*Chair of European and International Law*

---

**C**urrent article refers to the one of the most notable issues of modern international law – to the concept of self-contained regimes, which is the “strong”, substantive, type of exception of the general rule by the special. According to the UN International Law Commissions special norms are broken down into “weak” and “strong” types. The “weak” norms changes the general international law on special matters, while the “strong” are trying to eliminate the application of overall international law. The later were called “self-contained regimes” by UN ILC Special Rapporteur Riphagen and prominent scholar Bruno Simma.

We regard here to those case when a new legal regime arose that refers a spe-

cial, professional or branch issues. These regimes propose own mechanisms of responsibility for the breach of their “founding agreements”. Those mechanisms often collide (conflict) with the general international law. The “self-contained” regime is a subsystem that aimed to almost eliminate the application of general international law to the breaches and particularly the injured parties’ common means of counteractions.

We made a try to refer to the preconditions and environment for the advent of the “self-contained” regimes and discuss all those matters that do have significance for the given phenomena. A special focus is placed on the ICJ *Wimbledon* (1923) and ICJ *Hostage* (1980) cases, that ultimately, define the concept of “self-contained regimes”.

This article also highlights that we should not confuse the concept of “self-contained” regimes with the notion of autonomy from the international law.

---